

ԻՐԱՅԻՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԻ ԵՒ ՇՈՒԲԱԹ

Rev. Père G. Kalémkarian M. chitarist ngasse
Nº 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Գողթարիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Առաստաղեկ համար (երկու քիւր մէկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐԵԼԻ

Համակ դրամ եռայն դրկի հետեւեալ հասցեով
«ԻՐԱՅԻՆ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ.Ա.Ռ.Ն.Ա. (Պուլկարիա)
Редакция на ВѢСТНИКЪ
„Иравункъ“
ВАРНА (България)

Rédaction du journal
„Iraounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյշովին կամ մասամբ:
Իրաւունք ունի 20 տարեկան երե-
խէն աւելի անգամներու համար 20 0/0
զեղչ կը շինի:

ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՆՈՐ ԳԱՐ

Նոր տարին՝ որ իր հետ կը բե-
րէ նոր դարն ալ, անցեալ աղէտ-
ները յետկոյս թողով մեզ նորա-
նոր յոյսերու պատուանդանը կը
ննդկայացնէ: Հարիւս մերձակայ
անցեալի արեւմտեանը եւ գոհերը ա-
ռանց կարենալ մոռնալու, անոնց
վերջովը փրկուած եւ անցեալ դէպ-
քերու զգաւն փորձերէն խրատուած
ոչ թէ միայն նոր տարիի մը ալ
նոր դարու մը սեմին վրայ կը գտ-
նուինք այսօր: Ասկէ ճիշդ 100
տարի առաջ երբ հայութիւնը ի՞նչ
դարու զարեւոյթը կողմնէր ոչ
նուազ սարսափներու նիւթակայ էր,
ինչպէս այս վերջին տարիները:
Վերջացող դարու սկիզբները «ե-
նչէրէք» արհաւիրքն անհաւի
անտանելի էր որչափ այսօրուան
Համալիւթներու վայրագութիւնը:
Հետեւաբար անցեալ դարը Հայոցս
համար արհաւիրքի մէջ սկսած էր
սարսափներով ալ վերջացաւ, Ան-
ցեալ դարու սկիզբները Հայն ու
Հայաստանը քրիստոնեայ պետու-
թեանց ու հանուր Եւրոպայի բո-
լորովին անծանօթ էր: Իսկ այսօր
ամեն Եւրոպացի «Թուրքիա» եւ
«Անատոլի» բառերն արտասան-
ուելուն պէս Հայն ու Հայաստանն,
անոր քրիստոնէութիւնը ու զոհե-
րն ալ միանուագ կը յիշէ: Անց-
եալ դարու սկիզբը «ենչէրէքի-
ներ» ու անարդարեւին տակ անձայն
ու անշնչակ կը խողովուրդէր Հայը:
Բայց այդ դարու վերջին քառուր-
դին մէջ ինքնապաշտպանութեան
դոնէ տկար փորձեր ցոյց տուաւ
ու իր բողոքոյ ձայնը ընդհանուր
աշխարհի լսելի ըրաւ: Այս պարա-
գային թէ է քրիստոնեայ ազգաց զօ-
րաբանակներ մեզ օգնութեան չի
հասած, զոնէ այդ ազգերու հան-
րային կարծիքը մեզ նպատաւոր
հանգամանք մը առաւ: Այո, ան-
ցելոյն մէջ ծանր զոհողութեամբ
ինքնապաշտպանութեան փորձեր
ցոյց տուինք ու օտարներէն հա-
մակարանք քաղեցինք: սակայն մեր
թշնամին ալ մեզ նկատմամբ զգուշ
վարուելու եւ մեր ամեն շարժում-
քին կասկածով վերաբերուելու
ճամբուն մէջ դրինք: Հետեւաբար
նոր սկսող դարու մէջ վերջին տա-
րիներու մեր անխորհուրդ շարժ-

մանց կրկնութիւնը զմեզ մեծա-
գոյն աղէտներու կրնայ նիւթակել:
ուստի այժմ մենք մեր թշնամիէն ա-
ւելի զգուշ եւ հեռատես գործունէու-
թեան մը կը կարօտինք: անցե-
լոյն փորձառութիւնը մեր գործիչ-
ներուն գոնէ այս բանը սովորեցու-
ցած պէտք է ըլլայ: Խեղաւ գոր-
ծունէութեան շրջանը ալ ես ան-
ցած պէտք է նկատուի: Զղուշու-
թիւն եւ հեռատեսութիւն մեր գո-
յութեան կուտին բնաբանը ըլլալու
են: առանց այս պայմանին
եղած ու ըլլալիք արեւմտեանութիւնը
մեզ ու եւ է արդիւնք չեն երաշխա-
ւորեր: սա ալ ես հաստատուած,
ստուգուած եւ փորձուած ճշմար-
տութիւն մըն է:

Արդ, այս ճշմարտութիւնը ըն-
դունելով, ամեն հայ ազգային գո-
յութիւնը պահպանելու եւ ապահո-
վելու կուտին աննկուն զինուորը
պէտք է նկատէ ինքզինքն եւ այդ
ոգով թեւակալուի նոր դարու սե-
մէն ներս, հաւատք ունենալով թէ
յաջողութիւնը եւ յաղթանակը մեր
կողմն է: Ուստի իմ քաղաքութիւն-
ներս ալ նոյն հաւատքով եւ նոյն
ոգևորութեամբ կը գոչէ ՇՆՈՐ-
ՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՆՈՐ
ԳԱՐ:

ԻՄ ՍԻՐԱՍՈՒՆ ԶԱՒԱԿԱՑ ՆՈՒԷՐ ԿԱՂԱՆԴԻՐ

Ո՛ր եփ քոչունք իմ երեակ,
Օսար երկիր քաղաքում:
Արդե՞՞ք իսրայիլի հիւրի տակ
Զիս կ'անիծեմ օրն ի բուն:
Բարձր ու ազատ քաղաք մեր,
Յ'ախաւսից փոխեցի:
Ազգիս սիրով անհաւան
Հանգիստը մեր իսրայիլի:
Իմ ձագուկներ սիրաւուն
Ձեզ ալ եկաւ կարգա՞ր նոր,
Ունի՞ք արդե՞՞ք միտք նաշխուն,
Թե՞ ո՛չ սեղանս սգաւոր:
Մ'անիծեմ զիս վշտացած,
Երեակ քոչունակ հոգեկից,
Անքիւ ողբ՝ հայ որդեկաց
Զիս հեռացուց ձեզանից:
Իմ ի հեռուս հաւաքո՞ր զիրկ
Վարդապետիւր քշեցիդ
Ընդունեցի՞ք տարւոյ միտք,
Ու օրհնեցի՞ք մեր հայրիկ:
Թ. Թ. ՉԱՔՐԵԱՆ
1 Յունվար 1897
Վառնա
(*) Հանգուցեալ ծանօթ հայրենասէր
Թարու թիւն Զաքարիան իր չքաւոր վի-
ճակին մէջ այս ոտանաւորը իր կա-
ղանդէք իւր գաւազանը զրկած է:
ԽՄԲ.

1800-1900

Երէկ փակեցինք ժԹ.ՐԳ դարը
ճուր պատմական զանազան դէպքե-
րով եւ բազմադիմի պատահարներ.
ըով լեցուն, որոնք մեծ մասամբ
պատմութեան մէջ աւելի տխուր
էջեր պիտի աւելցնեն: Ընդհանուր
հակիրճ տեսութիւն մը կը բաւէ
որոշակի պարզելու ժԹ.ՐԳ դա-
րուն մէջ քաղաքական աշխարհի եւ
մարդկութեան կրած փոփոխու-
թիւնները: արհիւսի մեծ փոփո-
խութիւններ որոնք անցեալի մէջ
հազիւ մէկ քա՛հի դարերու բոլոր-
ուելովը կրնային ըլլալ:
ԺԹ.ՐԳ դարը բեղմնավոր եղաւ.
վերջին հարիւր տարուան շրջանին
մէջ եղած յառաջդիմութիւնները
բազմակողմանի եւ մեծ են, բազ-
մաթմամբ անցեալ դարերուն աւե-
լի զարգացած են արուեստն
ու գիտութիւնը: Պարտքի եւ
իրաւունքի խնդիրները մեծ տեղ
մը բռնեցին ժԹ.ՐԳ դարու պատ-
մութեան մէջ, արդարութեան եւ
հաւասարութեան կռիւները շատ
սուր ձեւի տակ երեւան եկան:
Սակայն դարուս մէջ անցած դար-
ձածներուն վրայ ընդհանուր հայ-
եացք մը պիտի բաւէ մեզ ցոյց
տալու որ ժԹ.ՐԳ դարի լուսաւո-
րութիւնը չը համեմատիր մարդ-
կութեան եւ ազգերու արդի իրա-
կան վիճակին հետ:
Թերթիւն կոչուած ու նպատակը
կը մղէ զի՞ն ժԹ.ՐԳ դարու մէջ
եղած քաղաքական փոփոխութիւն-
ները համառօտակի թուել հոս որ
ամեն բանէ աւելի սերտ կապ ու-
նի ազգերու ճակատագրին հետ:
Ուստի առնենք նախ Տաճկաս-
տանը:
Ս:
Տաճկաստան 1800էն մինչեւ
1900 պատմական կարճ ժամանա-
կամիջոցի մը մէջ ամենէն աւելի
փոխուած երկիրն է: Իր այս վեր-
ջի հարիւր տարուան պատմութիւ-
նը կ'սկսի վերականգնման ճիգե-
րով եւ կը լմննայ անկման յայտա-
բար նշաններով:
1800 թուականին Եւրոպայի,

Ասիայի եւ Աֆրիկէի լուսագոյն
մասերուն տէր այս մեծ կայսրու-
թիւնը տակաւին անգիտակից իր
գոյութեան սպառնացող վտանգին
ինքնապատահ կը թեւակոխէր ժ.
Թ. դարը: Իսկ այսօր, ի. դա-
րու սկիզբին, Թուրքիա երեւուն
եւ հոգեվարք վիճակով մը կը ներ-
կայանայ իր կէսէն աւելին կոր-
սնցուցած եւ մնացեալ մասին գո-
յութիւնն ալ լրջօրէն խնդրոյ ներ-
քեւ:
Թուրքիա անցեալ դարէն հազիւ
թէ կարճ շրջան մը բարձրացած, յան-
կարճ կ'զգայ զառիվալթի մը
վրայ գտնուիլն, եւ տեսնելով
իր դէմը ներքին մեծ վտանգ մը,
ինքնամփոփման ճիգ մը կընէ, եւ
իր դարաւոր ընթացքը փոխելու
կը հարկադրուի: Ուստի իր ա-
ռաջին քայլը կ'առնէ, Ենկիլէթի
ըստած տհարիւր տարրը վերցնե-
լով, որոնք Օսմ. իշխանութեան
տառաշին օրերուն ծնունդ առած եւ
մեծապէս սատաբած էին անոր
ժառանգութիւն:
Սուլթան Մահմուտ Ենիչէրի-
ները ջնջելէ վերջ ուզեց ազատ ու
լայն տեղ մը տալ եւրոպական
կարգ կանոններուն իր կայսրու-
թեան սահմաններուն մէջ, եւ այս-
պէսով ապահովիլ երկրին ապա-
գան ու համերաշխ պահել իր մի-
լիոնաւոր ալլազան հպատակները:
Սուլթան Մահմուտի երկրին
կացութիւնը լաւ ըմբռնած եւ ա-
պագան նախատեսած ըլլալուն մէկ
մեծ ապացոյցն է իր սա նշանաւոր
խոսքը, «Միւսլիմանը ճամիտէ,
խրիստիանը քրիստէտէ վէ Եա-
հուտի սինավոմտա թանըրըմ»:
այսինքն օրէնքի եւ արդարութեան
առաջ կրօնք եւ ազգութիւն նշա-
նակութիւն չունին, հպատակներս
հաւասար իրաւունքով մէկ ողջ
կը նկատեմ:
Բայց երկրին յոռի վարչութիւն-
նը ու իսլամ տարրին բարբարո-
սութիւնները այնպիսի կացու-
թիւն մը առաջ բերած էին, որ
Մահմուտի ջանքերը անյաջող եւ
զան ներկային համար:
Իր իշխանութեան օրերուն Թու-
նաստանի, Եպիպոտոսի եւ Սեր-
պիոյ ազատութիւնները վճռուե-
ցան Եւրոպայի միջամտութեամբ,

որ այդ առթիւ առաջին անգամ ըլլալով կուգար Թուրքիոյ ներքին գործերուն խառնուրդը :

Մահմուտի յաջորդը Ապտիւլ-Մէճիտ հօրը դրսեւորեալ շարունակող եղաւ . Թաւաղիմարի նշանաւոր հրովարտակովը օրէնքի առաջ իրաւանց կատարեալ հաւասարութիւն կուտար երկրին այլակրօն ազգաբնակչութիւններուն :

Ապտիւլ Մէճիտ այսպէսով կըրցաւ միջոց մը կտրել երկրին կառավարութեան դէմ գործնական բողոքներու ձայնը , որոնք հաւանօրէն պիտի շարունակուէին Յուսէնայի և Սերապիոյ ազատամէն յետոյ . միեւնոյն ատեն կը յուսուէր թրքաբնակ ժողովուրդը . իսկ Եւրոպայի ալ ապահովութիւն կուտար Թուրքիոյ ապագային նկատմամբ , եւ թուրք կառավարութիւնը ժամանակ կը շահէր իր գոյութիւնը վտանգող պատճառները վերցնելու :

Ապտիւլ Մէճիտ Եւրոպայի վստահութիւնը շահած ըլլալուն , յաջորդեալ զօրեղ դիմադրութեամբ ետ մղել Ռուսիոյ յառաջխաղացումը , խրիմի պատերազմով Եւրոպայի մեծ պետութեանց աջակցութեամբը :

Ինչպէս կը տեսնուի Տաճկաստան անցեալ դարու սկզբին իրեն սպառնացող լուրջ վտանգը մէկ կողմ նետեց և յետոյ յաջորդեալ ձեռք բերել եւրոպական աջակցութիւնը , որոնք պիտի կրնային շատ ու շատ նախանձելի փոփոխութեան մը ենթարկել թուրքիոյ վիճակը , եթէ սալթուքէն արամադիր և կամ ընդունակ ըլլար օգտուելու այս պատեհագոյն առիթէն :

Բայց եղած խոստանքները անգործադրելի մնացին , պաշտօնական շրջանակներու ջանքերը հաստատ հիման մը վրայ և ճարտար ձեւի տակ չգարձան , որով տիրող խաղաղ և փայլուն վիճակը խաբուսիկ բան մը եղաւ . Լիբանանի և կրէտէի կրկնակի խնդիրները ծագում առին :

Հին կրակն էր որ նորէն կը մըլտար . իսկ Ապտիւլ Աղիզ կայսեր վերջին օրերուն յայտնապէս բռնկեցաւ և սկսաւ արծարծիլ Պոսնա-Հէրսէքի և Պուլկարիոյ ապստամբութիւններովը :

(Շարունակելի)

ՌՈՒՄԱՆԱՀԱՅԵՐԸ

Այս սիւնակներու մէջ ստէպ առիթ ունեցած ենք Ռումանահայոց և իմասնաւորի Պուրէշի ազգային տխուր կացութեան նկատմամբ գրելու . և այդ կորսուելու վրայ եզող հօտը կրկին ազգային փարախին մէջ ամփոփելու համար վիհ . կաթողիկոսին ու Պատրիարքարանին ուշադրութիւնը հրաւիրած ենք :

Մասնաւորելով մեր խօսք Պուրէշի ազգայնոց , բնիկներուն իբր հայ կորստեան մօտեցած ըլլալը իոկ նոր գաղթականութեան հետ ըզհետէ նոյն շաւղին ենթարկուելու :

Եւրոպայի տեսած լքեալ վիճակը ցաւ ի սիրտ մատնանիշ ըրած ենք . ուստի այս անգամ ալ միեւնոյն տեսութիւնները կրկնել աւելորդ է : Մեր ընթերցողաց վերջին ճամբար սա չափ ըսել կը բաւէ թէ Ռումանիոյ շատ մը հայաբնակ քաղաքները Եկեղեցի , վարժարանի չէնք և հասոյթներ ունենալով հանդերձ Աղգ. վարժարան սենտրոնէ դադրած են . այնպէս , որ հին հայ գաղթականութիւնը իր մայրենի լեզուն կորուսած և նոր գաղթականներն ալ կորսնցնելու գաղտնաբերուած են , քանի որ այս վերջիններս անչափա հաս զաւակներն ունեն վարժարաններ յաճախել ստիպուած են : Թէեւ Պուրէշ բնակողները տեղւոյն հայ վարժարանը կերթան . բայց հոն ալ գրեթէ միայն ուսմանը համար կուանդուի . այսինքն այդ քաղաքի հայոց վարժարանը ազգային հասոյթներով ազգին զաւակները օտարացնելու միայն կը ծառայէ , ի նորհայն հոգաբարձութեան որուն գլուխը կը գտնուի Դանիէլ անուն տեղացի մը , որ 16 տարինեւ ի վեր անընդհատ հոգաբարձութեան պետը և ղեկավարը եղած է : Նա սմեն միջոց չէ խնայած միշտ ինքզինքը և իրեն կամակոր հետեւողները հոգաբարձու ընտրել տալու համար , որպէս զի 30000 Ֆրանքի մօտ ազգային հասոյթը ազատ համարձակ ուղածին պէս գործածէ , յաջորդներուն մանրամասն հաշիւ չի տայ և միայն համառօտ հաշուեկշիւը մը տեղւոյն քաղաքապետութեան ներկայացնելով մէջէն ելնէ : Այդ պարուն ազգային ինչ ինչ իրաւասութիւններ ջնջել տուած է և Եկեղեցւոյ հասոյթներուն և վարժարանին վերին հսկողութիւնը ունեն կառավարութեան յանձնած է :

Ռումանիոյ էն բաղմահայ կեդրոնը՝ որ մայրաքաղաքն ըլլալու առաւելութիւնն ալ ունի , այդ վիճակի մէջ լինելէն յետոյ զարմանալի չէ կալացի , իպրոքէի և ուրիշ մի քանի քաղաքներու ազգայնոց առանց վարժարանի մնացած ըլլալը և այդ հետեւութեամբ Ռումանահայոց կորսուելու , տիրող տարրին հետ ձուլուելու վտանգին ենթարկուելը :

Սակայն ինչպէս ուրիշ առիթ ալ ըսած ենք , իրաց այդ տխուր վիճակին դարմանը թէեւ շատ դիւրին չէ , բայց անկարելի ալ չէ : Կարող եկեղեցական մը , ազգեցիկ առաջնորդ մը կրնայ դեռ շատ բան ընել . և դեռ կը գրտնուին , թէեւ քիչ թուով , ազգասէր ու եկեղեցասէր ազգեցիկ բաւականահայեր որոնք բարձրաստիճան հայ եկեղեցականի մը շուրջը բոլորուելով , Ռումանիոյ ազգային վիճակին վրայ մեծ յեղաշրջում մը կրնան յառաջ բերել . բայց «նր է այդ եկեղեցականը :

Գեր. Գէորգ Եպիսկ. Իւթիւճեան, Եւրոպայաբնակ Հայոց առաջնորդ ,

անգամ մը փորձեց Ռումանիա մտնել , բայց դաւադրութեամբ մը մեծուեցաւ : Ռումէն կառավարութեան այդ կոշտ վարմունքի մասին Պատրիարքարանը ըսաւ թէ « Ռումանիա առաջնորդ զրկելու համար պէտք եղած պաշտօնական գործողութիւնները կաթողիկոսարանի կողմէ կանխաւ չէին կատարուած . մանուսագր թէ այդ տեսակ իրաւասութիւն մը Պատրիարքարանին վերապահուած էր » : Ահա անկէ ի վեր տասնեակ ամիսներ անցան ու դեռ Պատրիարքարանը ոչ մի գործ ցոյց չի տուաւ , և ինչպէս կերեւայ Ռումանիոյ առաջնորդի խնդիրը Օրմանեանի մօքէն անգամ ելած է այսօր , իսկ Գեր. Իւթիւճեան ըստիպուած է երեսի վրայ ձգել ուսմանահայ հոծ գաղթականութիւնը , չքեղ եկեղեցիները , հարուստ կալուածները և երթալ հոս հոն թափառիլ ափ մը հայ գտնելու անոնց երկու խրատ խօսելու համար . խեղճ Եպիսկոպոսը շատ անգամ մատուցածն ալ չի գտներ ուր կարենայ իր սրտաբուղիս ալելուները գեղեցիկ ու հաւատացեալներու հոգին ու միտքը վառել : Եւ թափառական հօտին թափառական հովիւն է նա , որ հազիւ կը գտնէ այս իրիկուն գլուխը հանգիստեալ տեղ մը վաղը հոն չի մնալու պայմանաւ :

Բայց ինչ պիտի ըլլան ուսմանահայերը : Այս կարեւոր հարցը կը մնայ լուծելի :

ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՄ

Իմքաղիր , կը խնդրեմ ձեզիէ որ ի սէր ազգին մանկուոյն և յօգուտ վառնայաբնակ հայութեան հաճիք ներկայ հիւրընկալիլ Խրաշնչի մէջ :

Բաւական հաւաստի աղբիւրէ կրմանամ թէ ազգային վարժարանին շուրջը նոր մեքենայութիւններ կը դարձուին քանի մը անձիւրու կողմէ որոնց գլուխը կը գրտնուի վարդօ : Այս ջախջախած հիւրը Աղգ. վարժարանը իրեն կուտան և ինքնակոչ Դաշնակցականաց բոյն ընելու նպատակաւ , առաջարկած է հոգաբարձութեան դասեր ստանձնել «առ այժմ» ձեր . պայմանաւ որ այս ինչ կամ այն ինչ ուսուցիչը վարժարանին մէջ պաշտօն չունենայ : Այս պայմանը որ կուսակցական և անձնական ստոր հաշիւներէ առաջ եկած է , առաջին հայեացքով մը ցոյց կուտայ թէ՛ վարդօ շարաթր քանի մը ժամ ձրի դաս աւանդելու պատրաստակաւ հոգաբարձութեան ազատ կամքին վրայ կը բռնանայ այժմէն և չի թողաւոր որ այդ պաշտօնական մարմինը անկախ կերպով իր պաշտօնէութիւնը կազմակերպէ :

Այո՛ , վարդօի առաջարկած այդ պայմանը , դեռ ոտքը վարժարանի սիւնն ենք չը դրած , կ'ա-

պացուցանէ թէ հոգաբարձութիւնը մէկ քանի ինքնակոչ Դաշնակցականներու «էնթրիք»ներուն եւ մեքենայութեանց կենթարկէ Աղգ. երկսեռ վարժարանը :

Սա կը նշանակէ թէ հոգաբարձութիւնը իր անկախութիւնը կը ծախէ շարաթր մի քանի ժամ ձրի դաս տամ ըսող «էնթրիք»ներու , որոնց ամենը մնայուն կէս դասատուի գործ հազիւ կրնան տեսնել , եթէ երբեք ուսուցանելու յատկութիւն ունին :

Հետեւաբար աննշան խոստումի մը փոխարէն Աղգ. երկսեռ վարժարանը ինքնակոչ Դաշնակցականներու քմահաճոյքին առարկայ ընել , վարժարանը ազգային ըլլալէ դադրեցնել կը կը նշանակէ :

Ինչպէս վերը յիշեցի , այս տեղի կութիւնները բաւական հաւաստի աղբիւրէ մը քաղած եմ . բայց միեւնոյն ատեն հոգաբարձութեան այս աստիճան տկար քայլ մը առնելու լուրը ինձ անհաւատալի թււեցաւ որ շատերու ալ գայլակղութեան պատճառ կրնայ ըլլալ : Ուստի հրապարակաւ կուգամ հարցնել հոգաբարձութեան թէ՛

1. Ուսուցիչ է որ վարդօ ձրի դաս աւանդելու պատրաստակաւ իր ոտքերը Աղգ. վարժարանէն ներս պիտի դնէ :

2. Ճշմարիտ է որ նա եւ իր 2-3 համախոհները այժմէն պարժան առաջարկած ըլլան որ այսինչը կամ այսինչը պաշտօնի չի կուտի :

Յանդորրութիւն գայլակղեալ մտքերու կը խնդրուի որ Պատ. հոգաբարձութիւնը բարեհաճի այս երկու հարցումներուն հրապարակաւ պատասխանել , վստահ ըլլալով թէ Աղգ. վարժարանի յառաջդիմութեան անկեղծ ցանկացող մըն է այս տողերը գրողը :

ՌԻՐԱՅ

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

«Հայրենիք» թերթի վարչութիւնը ամերիկայէ հետեւեալ ծանուցումը զրկած է միջ ի հրատարակութիւն :


Յաւօք սրտի կը ծանուցանեմք թէ , այն չէնք . ուր «Հայրենիք» կը հրատարակուէր , անցեալ գիշեր հրոյ ճարակ եղաւ :

Վարչութիւնը կարելի եղածին չափ շուտով պիտի հրատարակէ թերթը :

Մեր բաժանորդները կրնան ապահով ըլլալ զի «Հայրենիք» ապահովագրուած էր :

Վարչութիւն «Հայրենիքի» Մեր առժամեայ հասցէն է՝

The Hayrenik
458 3rd Ave., New York City.
99 գեկտ. 13



ԼՐԱՔԱՂ

Աթէնք հրատարակող «Միութիւն»
թերթի խմբագրութիւնը հետեւեալ նոր
առաջարկը կը ներկայացնէ հայ ժողո-
վորդին:

«Մեր բոլոր թերութիւնները
բաւական չեն: Այդ գործերն իրենց
հարթ ուղիին մէջ զննելու և կու-
սակցական երկպառակութեանց մի-
անգամէն վերջ մը տալու միակ
միջոցն է յառաջիկայ 1900 թուա-
կանին մայիս ամսուն մէջ Ա.Զ.Գ.
ԽԱՌՆ ԺՈՂՈՎԱԸ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ
ԻՆԷՆ ԲԱՐԻՂ, ընդ նախագահու-
թեամբ Տիար Մ. Զեքիանի և ան-
դամակցութեամբ մի քանի նշա-
նաւոր Զեղոք անձնաւորութեանց:

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԱԸ կուսակցու-
թեանց անցեալ գործունէութեանց
վրայ չպիտի վիճաբանի, այլ Այդ-
գործիքը վարելու եղանակները պի-
տի որոշէ ընտրելով ազգին համա-
րութիւնը զբաւող վստահելի մար-
մին մը, որ պաշտօնապէս ճանչ-
ցուի եւրոպական պատմութիւննե-
րէն իբր հայութեան ընդհ. ներ-
կայացուցիչը:

Ամեն հայ, ըլլայ կուսակցական
ըլլայ ոչ-կուսակցական, ԽԱՌՆ
ԺՈՂՈՎԱԸ մասնակցելու իրաւունք
ունենալու է:

Իւրաքանչիւր պատգամաւոր
պէտք է ընտրուի իր սահմանի մէջ
բնակող հայ հասարակութենէ,
որմէ ստանալու է վկայական մը
և պատգամաւորը դեռ չի մեկնած
վկայագրի մի օրինակը կանխա-
ղրկելու է Տ. Մ. Զեքիանի հասցէ-
ին:»

ԲԱՆ ԱՍԻՐԱԿԱՆ (13)

ՆԵՏԱ

(ՄԱՍԻՍ ՊԱՏՄԱԾԸ)

—Ահա՛, ըսաւ, ինչ պատմեց ինձի
այս մասին ծերունի Մլաւէն, ինչու
որ Նէտան անոր տունը տարբեր էին,
ուր կը բնակէր նաեւ ազան. հայրս
Նէտան ետեւէն կերթար ճամբան դի-
մացը կեկէ Տրակոյա:

—Ինչ կընես Սթոյքօ քան, ո՞ր
կերթաս, հարցուց Տրակոյա զուարթ
դէմքով:

—Միթէ դուն դեռ չես գիտեր պա-
տահա՞ծը, հարցուց հայրս:

—Ինչ է պատահե՞ր, ես բան մը չի-
մացայ, կըսէ Տրակոյա:

—Տէլիպաշիները առին քու քոյրդ
Նէտան եւ աղային տղանը տարին. ա-
հա ինչ է պատահե՞ր:

—Ո՛րք է նա, ո՞րք է, ըսէ, Սթոյ-
քօ որք՞ տունն է աղան, գոչեց Տրա-
կոյա ու սկսաւ լալ:

—Չե՛ս տեսներ, կը տեսնե՛ս այն և
կիները ու այն երկու թիւրքերը, ո-
րոնք դէպի Մլաւէնի տունը կերթան:
Այդ չորս կիներէն մին քու քոյրդ է,
երկուքը կէպէնտի, եւ չորսորդը աղա-
ին կինը. աղային կինը բարեօրիտ է
որովհետեւ քրիստոնեայ է, բայց ինչ
կրնայ ընել, երբ ինքն ալ անհաւատ-
ների ձեռքէ ինկած է: Անոնք առին:

Մենք այս մասին դեռ որ եւ է կար-
ծիք չենք կարող յայտնել, քանի որ
Տ. Մ. Զեքիան եւ իր Լ.Ն.Ու.Մ.Ն.Ի վեր-
ջին թուոյն մէջ խառն ժողովոյ մասին
բան մը չէ ըսած:

—Սէնի դատարանը 200 ֆր.
դրամական պատժոյ դատապար-
տեց հարաւային Ափրիկէի խու-
ղարկու Տ. Պղանտեմը, որ հար-
ուածած էր Տ. Նշան Միլիքեանը.
ու թիւ կուտրած ըլլալուն համար
1500 ֆր. հաստիցում ստացաւ հա-
րուածողէն:

—Պոլսէն ի՞նչ լիակաւ վարժա-
րանէն Տիար Կարապետ Սարգիս-
եան և ժընէվէն Տիար Լիւնի Պո-
ղոսեան դեղագործի Նիշանն աւտո-
րած ըլլալով, փայլուն քննութիւն
ներ անցնելէ վերջ վկայական ի
ձեռին քաղաքս ժամանած են: Բը-
նիկ վառնացի այս երկու երիտա-
սարդք իրենց ծննդավայրին մէջ
կուգան կարեւոր դերք մը բռնել
ու վառնայաբնակ ժողովուրդին
համակրանացը արժանանալ:

—Ուրախութեամբ կիմանա՞ք
թէ Բարիկի Ատամնուրուժական
վարժարանին տնօրէն Տիար Պո-
տոն Նոյն հաստատութեան վար-
չական ժողովէն թոյլտուութիւն
ստացած է թոշակի կարեւոր զեղ-
լով մը ուսանող ընդունիլ մեր բա-
րեկամ Պ. Երուանդ փէշտմալ-
ճեանը:

—Կալոց բնակող բնիկ Կամախ-
ցի Տ. Գրիգոր Յակոբեան իր հա-
մեստ քսակէն կրկին 30 ֆրանք
դրամ է Պատրիարքարան ինը-
պատտ Հայաստանի սովիւրց: Տ.
Գ. Յակոբեան՝ որ նիւթական մեծ
առաւելութիւններով չի փայլեր,
ամեն առթի մէջ առատաձեռն

Տրակոյա ա՛լ տկանջ չդրաւ հօրս խօս-
քերին: Կը վազէ, կը հասնի թրքու-
հիւներին եւ անոնց առջեւ կը կենայ:
Հայրս անոր ետեւէն կերթար: Տրա-
կոյա կը գրկէ իր քոյրը ու կը սկսի
լալ ու պոռալ: «Ես չեմ տար գայն,
մեր ձեռքը չեմ թողոր, ես հոս պիտի
մնանիմ գայն ալ պիտի սպաննուիմ, այլ
չպիտի ձգեմ սր ա՛յ պատուէք գայն:
Չեմ ձգել. թող առէք քոյրս» կըսէր
պառտաներին, որոնք Նէտանի ձեռքէն
բռնած կը տանէին:

—Ինչպէս կը համարձակիս, անհա-
ւատարիմ չուն: աղային հարկմը ան-
պատուել: Ինչպէս կը համարձակիս
թիւրք կիներին աչքերին նայիլ. ինչ-
պէս կը համարձակիս գրկել աղային
գոտընը ու անոր աղախիններուն հայճո-
յիլ, ըսաւ պատահաբէն մին, կորիւր
սըկէ թէ ոչ կաղամբի նման գլուխդ
կը գլուրի հիմա:

—Կորիւր սըկէ. թէ ոչ չան պէս
ցիցի վրայ կը նստիս, ըսաւ միւս պա-
տաւ:

—Մի կոտիւր այս զազաններին հեա
ըսաւ մանկահասակ կինը. ասոնք քեզ
պիտի իրանեն, թող քոյրդ ու չուտով
մը գլուխդ ազատէ: Կեանքդ վրայ պիտի
տաս առանց գայն փրկել կարենալու:
Թող գայն Աստուծոյ. նա պիտի մաա-
ծէ մեր հոգիին համար: Ամեն ինչ Աս-
տուծոյ ձգէ եւ ազօթէ մեզի համար:

—Չպիտի թողում գայն, մէկու մը
չեմ տար, նա իմ քոյրս է: Սուլթանն
անդամ գայ, անոր ալ չեմ տար: Յըր-
ուեցէք ասկէ, անիծեալ ճիւղաւոր, ա-

զտնուած է: Յիշեալը իր այդ
կարգի բարեգործութիւններովը
օրինակելի անձ մը կը ներկայանայ
Ռուսահայացի մէջ:

—Տ. Լ. Տէպագ «Օռօռ» թիւ-
թի մէջ խորհուրդ կուտայ Բարիդ-
ցիներուն որ եթէ Սուլթանը 1900ի
Յուլիանդէսը այցելէ անոր ան-
ցած տեղերը «կեցցէ՛» Հայաստան
կեցցէ՛ կրեա՞նք» պոռա՞ն:

—Բարիկի բժշկական շրջանակին
մէջ վերջերս իր գիտութեամբն
ու հանճարովը մեծ համարս ստա-
ցող Տիար Տօք. Սէքեան իշխան
Գուրտոն Խոսինեանէ Ս. Կատա-
րինէի Արքայական աստիճանին
Ասպետ անուանուած է:

—Կովկասահայ նկարիչ Տ. Գէ-
որգ Պաշինեանը Բարիդ գտցած
է, ուր 1900ի Յուլիանդէսին
բաժանումին մէջ երկու սքանչելի
նկարներ պիտի ցուցադրէ, մին
«Արարատը» և միւսն «Ամպերը»
որք իր ծննդավայրի տեսարան-
ները կը ներկայացնեն: Յիշեալ
նկարիչը իր քով ունի ծախելու
համար ոչ նուազ արժէքաւոր ու-
րիշ նկարներ ալ, ինչպէս Սիւան
կղզին ու լիճը և ուրիշներ, որոնք
Կովկասի և ռուսական Հայաստա-
նի նշանաւոր տեսարանները կը
պատկերացնեն:

ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐ ՄԱՌԻՋԱԿԸ

ՆԵՂԻՆԱԿՈՒԹԻՆ

ՀԱՆՑ. ՏԻՐԻՍԱՆ ՄԱՆԱՎԵԱՆ

Նոր լոյս տեսած այս թատեր-
գութիւնը ստացած ենք:

Գին 1 ֆրանք. կեդրոնատեղին
է Օննիկ Բարսեղեան Արեւելեան
տպարան:

Վառնա

Նունա Տրակոյա չըլլայ, եթէ զուգորդ
չլինիմք իմ, ըսաւ պառաւանքին ու
անոնց վրայ յարձակեցաւ:

Երիտասարդ թրքուհին կըսէր որ
փախչի. կաղաչէր որ ձգէ Նէտան ու
յղուխն աղատէ. բայց նա մէկուն մը-
տիկ չէր ընել: «Փախի՛ր, փախի՛ր,
կըսէր, թէ ոչ վայ քեզի: Տրակոյա
քոյրը կը բռնէր ու թող չէր տար: Եր-
բոր պառաւանքին մէկը Նէտան իր ե-
տեւէն քաշել կուգէր, Տրակոյա գաւա-
զանով մը ոտքին զարկաւ ու յափշտա-
կեց քոյրս: Տէլիպաշիները հրացաննե-
րը գետին կը ձգեն, Տրակոյա վրայ
յարձակելու ու Նէտան անոր ձեռքէն
առնելու համար. բայց հայրիկս այդ
հրացաններէ մէկը կառնէ եւ փողէն
բռնելով կըսէր Տրակոյա՛յ, օգնել: Մեծ
ժխոր կը բարձրանայ: Տուններէն բաղ-
րաթիւ Տէլիպաշիներ կըլլին. բայց
Տրակոյա ա՛լ հեռու էր: Նէտա անոր
ետեւէն փախած էր: Հայրս կը բռնէն
կը կապեն ու աղային մօտ կը տանին,
Աղան տեղեկութիւն չունէր եղածէն եւ
կը հարցնէ թրքուհիներին Վու Տէլի-
պաշիներին. «Ինչո՞ւ բերեք էք այս
չունը»: Յետոյ դէպի հայրս դառնալով
կըսէ. «Հէ՛յ կեանքուր, ինչ ըրիր: Ին-
չո՞ւ բերին քեզ հոս»:

—Յանցաւոր եմ, աղա, յանցաւոր
եմ, ըսաւ հայրս: Ներէ՛ ինձի աղա,
ներէ՛. բարի եղիր արգալաւոր եղիր:

—Լու՛է, կեանքուր, գոչեց պառաւան-
քէն մին, որ կը կոչուէր հարկմի պե-
տը: Տէլիպաշիները սեւամորթ հաւաք
չէին բռներ: «Դուն ձեռք վերցուցիր

ԱՐԹԻՆ ՎԷ ՕՐՄԱՆԵԱՆ

— 0 —

Բլէքնա 7 դեկ. 99

Մալիւմ օլտըղը իւրէ մապէ-
յինտէ պիր գօմիսիօն վասըթասը
իւէ պազը էրմէնի գարտաշարը-
մըղըն մահպուստան ավֆ վէ տա-
խիլէ հօլճըղըղարը միւսատէ իթ-
միշ, վէ պու սէպէպտէն ուօլայը
Արթին Օրմանը թէշվիքլէ մու-
գատէմ իսթիֆասընտան կէրու
ալտըրմըշ տըր, շու իրատէտէն
տօլայը:

Հալպուքի աւլա պիր մէնֆա-
աթը միլլիմիդ օլմամըշ տըր վէ
թէմինաթլարտան հինէ աճիզատտ
իտիլէ պիլիւր, զիրա Անատօլ գըր-
կընլարը տէվամ իթմէքտէ շիւբ-
հէլիլէրի թուլթուլագտա, եանի
պիր մէմուր Սուլթան հիմայէսին-
տէ նէ՛ էհէմմիյէթի օլուր, վէ
իսթէրմի՛ իսթիֆատէի շախսիյէ-
սինտէն մահրում գալսըն. քէզա
Օրմանեան օ սարը ալթունլար վէ
խասաթըր արապասը իլէ սալթա-
նաթլարտան իսթէրմի մահրում
գալսըն շու միլլէթին բէրուշան-
լըղլարընտան: Ետօլայը, քէզա օ թա-
ալար, թաթլըլար աֆիյէթլէնէն
զաթ իսթըր իտէր մի՛. պու կիւն
միլլէթ գարտաշարըմըղըն քիմի աճ
եաթմագտա քիմիտէ իսկէնճէ վէ
սիւնկիւ իլէ գարնընը տօյուրմագ-
տա տըր. սաղըր օլմուշլար, պու վա-
գաւարը իշիթմէմէլլիյէ վուրու-
յօրլար: Զիրա իշլէրինէ էլվէրմէզ
ֆագաթ պու տէրէճէ մէտուլիյէթի
իւսթիւնէ ալմագ իյի տէկիլ վէ
էյուէ տէլալթ իթմէյօր:

Չափալը միլլէթտաշարմըղ

աղային հարէմին, հայճոյեցիր մեր Աս-
տուծոյն, դուն պէտք է կախուիս: Յե-
տոյ աղային կողմը գառնալով ըսաւ:
«Աղա՛ նա մեր Հայնէի ձեռքին դար-
կաւ վարը կիսամեռ կը կենայ, կախէ
սա շունը»:

Աղային դէմքը փոխուեցաւ. իր կէս-
քուն աչքերը կը բացուին ու կը չո-
զան, չունչը կը կտրի, ձեռքերը կը
սկսին գողգողալ եւ իր աթի մօրուքի
ծայրերը վեր վեր կը բարձրանան: Գը-
լու իւր վեր կառնէ ու կը գոռայ. «Ա՛հ
քեզի գարշահոտ շուն: Ի՞նչպէս համար
ձակեցար ձեռք վերցնել տին-իսլամնե-
ր ն: Հէ՛յ, պոռաց կոկորդալի իր ծա-
ռաներին ու Տէլիպաշիներին. առէք
սա կեանքը շունը ու հանեցէք մոր-
թը: Կը լսէ՞ք»:

Գանի մը Տէլիպաշիներ հօրս կը մօ-
տենան. կը բռնեն ու կըսեն. —Հայտէ
կեանքուր, եկուր փորձես սո՛ւր են մեր
դանակները»:

Այս միջոցին ներս մտաւ երիտասարդ
թրքուհին, գետին ինկաւ, աղայի ոտ-
քերը գրկեց ու ըսաւ ցաւալի ձայնով.
«Սպասէ՛, սպասէ՛, քիչ մը. լսէ՛ ինչ
պիտի ըսեմ քեզի. վերջը ըրէ ինչ որ
կուզես: Կազալեմ ինքիւրքս լսէ. մտիկ
ըրէ եթէ ունիս սիրտ ու Աստուած»:

—Ինչ եղար, Հայնէ, ինչ բանի
համար կաղաչես. քեզի ալ զարկած
չըլլայ այս կեանքուր: Ել ու ըսէ ինձի
ի՞նչ պատահե՞ր է. գոյնդ նետեր է, ը-
նէ:

— 0 —

Отговорникъ Н. Драгулевъ
Печ. „Взаимность“ — Варна